

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2010 թվականի երրորդ եռամսյակի ամփոփում, այդ թվում՝ սեպտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 2010թ.-ի երրորդ եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 128 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 128 բողոքներից 38-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 90 բողոքներից 13-ը երրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով:

2010թ.-ի երրորդ եռամսյակում ներկայացված ընդհանուր բողոքների քանակը	128
1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	90
1.1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից, սակայն Հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	50
1.2. Բավարարվել են Կազմակերպության կողմից՝ Հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որն օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	22
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվել պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր Հաճախորդի՝ որպես սպառողի, շահերի ոտնահարման փաստը	5
1.4. Ընդունվել են քննության գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	13
1.4. 1. վարկային գործարքների հետ	4
1.4.2. սպահովագրական հատուցումների հետ	3
1.4.3. գրավատների գործունեության հետ	1
1.4.4. վճարահաշվարկային ծառայությունների հետ	5
2010թ.-ի երրորդ եռամսյակում գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքներ, ուղղված՝	13
Բանկերի դեմ	8
Վարկային կազմակերպությունների դեմ	1

Ապահովագրական ընկերությունների դեմ	3
Գրավատների դեմ	1

Հաշտարարի գրասենյակը *սեպտեմբեր* ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 43 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 43 բողոքներից 11-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 32 բողոքներից 5-ը սեպտեմբերին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության:

2010թ.-ի սեպտեմբերին ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	43
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	32
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	13
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	8
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	6
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	5
1.4. 1. ապահովագրական դեպքերի հետ	1
1.4. 2. վարկային գործարքների հետ	1
1.4.3. վճարահաշվարկային գործարքների հետ	3

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am